

ԻՐԱՎՈՒՆԿ

ԻՐԱՎՈՒՆԿ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիսիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպարանի համար (երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԵՒԻՉ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն դրկի հետեւեալ հասցեով

ԽՐԱՎՈՒՆԿԻ ԿՐԴՐՈՅՑ — Վ. Ա. Ռ. Ն. Ս. (Պոլսկարիս)

Редакция на вѣст.

Rédaction du journal

„Ирaвункъ“

„Iravounk“

ВАРНА (България).

VARN (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Իրականացման տողը 20 սանթիմ. երե-
ւոյն աւելի անկաւանդաւ մտնար 20 օ/0
գնդ կը լինի:

ԱՆՔԵՑԻ ԴԵՄՈՒՆԱԽՈՐԴՈՒՆԵՐԸ

Նարոյէտներու օրերէն ի վեր այս առաջին անգամն է որ ընդ-
հանուր աշխարհի ուշադրութիւնը
միայն մէկ կէտի մը վրայ կը կեդ-
րոնանայ. մեծ ու փոքր պիտու-
թիւններ, ազատ ու հպատակ ժո-
ղովուրդներ, հարստահարող ու
հարստահարեալ ցեղեր ամենին ի-
րենց բոլոր զգայարանաց կարո-
ղութիւնը լսելեաց վրայ ամփոփե-
լով լա չէյ արտասանուելիք պատ-
գամները վարկեան մը առաջ իմա-
նալու սահմաններէն կարտա-
յայտեն: Ուրիմպոսի բարձանց վրայ
ստուածածնային Արամազդայ գա-
հոյից շուրջը բոլորուող գիւղ ու գի-
յուհիք պիտի նախանձէին լա
չէյ հաւորուող մահկանացուց ժո-
ղովոյն վրայ, որ այսօր ունելի ու-
շադրու ու պատկառելի հանգա-
մանք մը ստացած է քան իրենցի-
նը:

Դեմոստոսիոսը իր անհա-
ցող ու չը մասնակցող պետութիւն-
ներ ձեռքբերին իրենց սուրբին
վրայ դնելով աչքերնին դէպի լա
չէյ յառած են. յափշտակիչ ու
վարագ լռեալները յանցաւորի
յատուկ սրտագողով մը Դեմոս-
տոսիոսը արտադրեցին որոշումներուն եւ
վճռին կըստասին սարսուռով ու
ահաբեկ սրտով. իսկ ճնշուած ու
հարստահարուած ազգեր իրենց ի-
րաւանց եւ արդարութեան լա չէ-
յէն յաղթական գուրս գալուն կը
սպասեն ակնապիչ:

Վերջապէս այս օրեր բոլոր աշ-
խարհ սպասողական դիրքի մը մէջ
կը գտնուի. թէեւ մեծ պիտու-
թեանց զինարաններու ծխնելոյղ-
ները կը միան ու հրանիւթի եւ հը-
րանիւթի պատրաստութիւնները կը
շարունակեն, բայց քաղաքական
հորիզոնին վրայ ըստ երեւոյթին,
ամեն բան հանգարա է, ինչպէս
որ կը վայլէ Զէնընկեցութեան
Դեմոստոսիոսը իր անհա-
ման օրերուն:

Վերջին ամիսներու մէջ քաղա-
քական աշխարհի ընթացքին հե-
տեւելով տեսանք թէ՛ մեծ պիտու-
թիւնք յամառ աշխարհակալու-

թեան ձգտումներու հետեւեալ ե-
ղով հասնական վտանգներու դի-
մադրուելէ աւելի՛ խաղաղ իրաւա-
խոնարհեան ուղին նախընտրեցին:
Անգլիոյ ծովային նախարար Պ
Քոչըն անցեալները ուրախութեամբ
յայտարարեց թէ հորիզոնէն ան-
հետացած են սպառնական նշան-
ները եւ աւելցուց «Ռուսիոյ հետ
բարեկամական կորագործութեան
մը յանգեցանք»: արդէն Գերմանի-
ոյ հետ նոյն կարգադրութիւնը
քանի մը ամիս առաջ ըրած էինք.
նաեւ Ֆրանսայի հետ, առանց փո-
խադարձ ազգային զգացումները
վերաւորելու, համաձայնութեան
յանգուծ ենք: Չեմ վարանիր դի-
տել տալ թէ՛ բաղդատմամբ մի
քանի ամիս առաջուան վիճակին՝
յորում բուռն զբոլութիւն մը կը
տիրէր. Եւրոպայի կերպարանքն
այսօր ո՛րչափ տարբեր է:»

Ընդհանուր աշխարհի բաղդը ի-
րենց ափին մէջ ունեցող այս մեծ
պետութեանց միջեւ սպառնական
կերպարանք առնող խնդիրներու
իրաւախոնարհեան եղանակով սա
վերջին կարգադրութիւնները կըր-
նանք գրաւական նկատել Դեմոս-
տոսիոսը իր անհա-
պատկառութիւնը յաջող ելքով մը
պատկուելուն. ելք մը որ ազգաց
միջեւ գոյոռաբնն ունեցած խնդիր-
ներն իՐԱՎՈՒՆԿԻ ՈՒՆԵՐԵՐԸ
կարգադրելու եղանակին յանգի:
Ուրեմն մեզ նման բռնութեան
զոհներ յուսույէ աւելի կրնան հա-
ւանական համարել թէ՛ ձուռ է
այն ժամանակը, յորում զի-
րենք ճնշող բիրտ ուժին դէմ
առ դէմ կայնած իրաւունքի ու
արդարութեան յաղթական պսա-
կը պիտի ընդունին միջազգային
իրաւախոնարհեան տեսանին առջեւ
եթէ կազմուի:

Այս աշխարհակալութիւնը
բռնապետներուն արդէն սարսուռ
ազգած է. եւ այս պատճառաւ ու
կըստի թէ՛ Օսմ. կառավարութիւ-
նը պատուիրած է իր պատուիրակ-
ներուն շտաբագրել միջազգային
իրաւախոնարհեան տեսանի մը կազ-
մութեան որոշումը: Սակայն ա-
ւելորդ է բացատրել թէ ինչ կա-
րելութիւն կրնայ ունենալ մի-
այն թուրք պատուիրակներուն
շտաբագրելը երբ միւս բոլոր պե-

տութեանց ներկայացուցիչներ հա-
մաձայնած ու ստորագրած ըլլան
այդ որոշումը: Մանաւանդ թէ
մայիս 14 թուով Նիւ-Եօքէն առ-
նուած հեռագիր մը կաւետէ թէ
Միացեալ Նահանգաց պատուի-
րակները հրահանգ ստացած են
ազգաց միջեւ ծագած անհամա-
ձայնութիւնները իրաւախոնարհ
տարանով վճռելու եղանակին
ուժ տալու իրենց բոլոր զօրու-
թեամբ:

Հետեւեալ լա չէյ Դեմոս-
տոսիոսը իր անհա-
պատկառութիւնը առջեւ թրքական
բռնապետութիւնը ու իր նմանե-
րը միայն սարսուռ կը զգան. իսկ
մենք ու մեզ նման զրկուածները
հոն որոշ յոյսեր ունինք: Մեր
այդ յոյսերը՝ որ իրաւունքի եւ ար-
դարութեան վրայ հիմնուած են,
եթէ երբեք յաջողութեամբ չի
պատկուին ու կրկին բիրտ ուժը
իրաւունքին յաղթանակէ, հայազ-
գը բնաւ պատճառ մը չունի իր
կանխաւ ընտրած յաղափոխական
ուղիին մէջ աւելի հաստատ ու զօ-
րա ուր քայլերով չի յառաջանալու:

Յ. Գ.

ԹՂԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Աստիգ 10 մայիս 99

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԶԴԱՆՔԸ (ԲԻԻԶ)

Պ. տը Յրէյսինէի միջխտու-
թեան հրաժարումը բաւական ծա-
նր կարեւորութիւն ունի, այն
պատճառով որ այդ Ֆրանսայի
ընդհանուր կացութիւնն մտնու-
ցոյց կընէ: Տանն եւ հինգ տարի-
ներ շարունակ Ֆրանսական բանա-
կը պատրաստուեցաւ, դէպի իր
հայրենիքն մեծամեծ պարտակա-
նութիւններ կատարելու երազով:
Բայց քանի որ քաղաքական եւ
միջազգային տեսակէտով, քա-
ղաքական երկինքն պարզուեցաւ,
Ֆրանսան ինքզինքը չըլտպատուած
գտաւ ընչպիսի պատկան, զինուո-
րային սովաւապետական եւ սօ-
ցիալական միջազգայնութեան հո-
սանքէ մը, որն առաջ բերաւ այդ
զայարումներն որովք այսօր Ֆրան-
սան կը շարշարուի: — Հաստա-
տութիւններու ընդարձակումն էն.

տուտրիական եւ ֆինանսական ա-
ռաջդիմութիւնը, կրթութեան եւ
ուսմանց տարածումը, բարեկե-
ցութեան պէտքին օր ըստ օրէ ա-
ճումը, ծայրագոյն ազատութեան
վրայ վիճաբանելու սովորութիւն-
ները, շուտով աւակալարական պե-
տութիւններն վտանգի մէջ կը դը-
նեն, այս օրէնք մըն է որմէ եւ ոչ
մի ազգ կրնայ խոյս տալ:

Նոյն բանն պիտի պատահի Մի-
ացեալ-Նահանգաց մէջ, ինչպէս ի
Ֆրանսա, եթէ ամերիկեան ժողո-
վուրդին զօրաւոր դատողութիւնը
վերջ մը չտայ այն հասանքին որ
երեւան եկաւ վերջի մի քանի զին-
ուորական յաջողութիւններէն յե-
տոյ: (Եթէ մինչեւ այսօր Ֆրան-
սա ազատեւ է, պատճառն այն է
որ, վտանգի ժամանակ նա իր բո-
լոր պաշարներով իրեն կըստանայ:
Այս դարու սկիզբէն ի վեր Ֆրան-
սան աւելի բարդ դրութիւններ ու-
նեցեր է քան այսօր, նա այդ
դրութիւններէն պատուով դուրս է
եկեր, եւ ինչ որ ալ ըսեն հասա-
րակապետութիւնն խոնարհեցներու
համար աշխատողներն, Ֆրանսան
այլ եւս երկար չը պիտի մնայ ի-
րեն դէմ լարուած թակարդներուն
մէջ:

Պ. ՏԸ ՖՐԵՅՍԻՆԵԻ ԵՒ ՏԵԼԻՍՍԵԻ

Այս կողմեան պատգամաւոր Պ.
Փօլ տը Գասանեալ որ ընդհան-
րապէս հասարակապետական մի-
նիստներուն վրայ կը յարձակի եւ
որ հակառակ է Տրէյֆուսի, իւր
ՂՕթօնիք թերթին մէջ ՏԵԼԻՍՍԵԻ
մասին — որուն համար կըսուի թէ
Պ. տը Ֆրէյսինէի հրաժարման
պատճառ է եղեր — հետեւեալ
կերպով կը խօսի:

«Ես հաւատացած եմ որ Պ. ՏԵԼ-
«քասէի եւ Պ. տը Ֆրէյսինէի միջեւ
«պատահած կարծեաւ միջա-
«դէպն, խօսարանին գաւիթնե-
«րուն տակ, խմբագրական սեղան-
«ներու շուրջը պատմուած առաջ-
«պիներէն է, առտպել որ այնքան
«անարդար է որքան քիչ ճշմարիտ:
«Պ. ՏԵԼԻՍՍԵԻ, մասնաւորապէս ող-
«բալի պարագաներու մէջ մեծ
«ծառայութիւններ է մատուցեր
«երկրին: Պէտք է անոր երախ-
«տապարտ ըլլալ, այն թշնամա-
«նաց համար զորս նա կրեց, վա-
«սնի նա զանոնք կրեց հայրենի-
«քի համար եւ ինքն չէր որ զա-
«նոնք զրգուեր էր:»

A. Saisy եւ Միլիտ Ս. Դաւիթ-բեկ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

— 0.0. —

Նկատելով թէ՛

Ս. Զատիկի տօներու առթիւ միայն տէր Գէորգ հայրը չէր կարող քաղաքիս հոծ գաղթականութեան հոգեւոր պէտքերը ըստ պտուղածի մատակարարել, ժողովրդեան խնդրանք, Հոգաբարձութիւնս Երեւանի հեռագրաւ հրաւիրեց Տ. Յովակիմ հայրը առ ժամապէս քահանայադոժեալութիւնը կէս առ կէս բաժանել իրենց մէջ, բայց տեսնելով թէ Տ. Գէորգ Հիւրմիւլեան կը հակառակի հաւասար բաժանման, և անոր այս հակառակութիւնը տէրունական օրերու մէջ կրնար անհաճոյ միջադէպերու առիթ տալ, Հոգաբարձութիւնս որոշեց, Տ. Գէորգ հօր առաջարկութեան համեմատ, գանձանակի և զանազան հատոյթներու 0/0 25ը և տուն օրհնէնքի հատոյթէն 100 Ֆրանկ յատկացնել Տէր Յովակիմ հօր:

Արդ ցաւ է մեզ յայտնել թէ՛ Տ. Գէորգ քահանայ Զատիկեան բոլոր հատոյթները ինք գրպանած և իր խոստացած գումարը չի վճարելէ զատ ելած է տունէ տուն և խանութէ խանութ պտուղով սխալ տարածանքներու ընել ժողովրդեան մէջ իր պարտականցութիւնը արդարայնել ճշնելով, ինչպէս սր տեղական թերթի մը մէջ ալ այդ նպատակաւ բոլորովին ճշմարտութենէ հեռի յայտարարութիւններ ըրած է:

Ահա այս պատճառաւ Հոգաբարձութիւնս ներկայիս կուգայ իրաւունքն զայն կողմէ մտքերու ճշմարտութիւնը հրապարակել յայտարարելով թէ Տ. Գէորգ քահանայ Հիւրմիւլեան որոշուած գումարը ցարդ չը վճարելուն մէջ

ըստ ամենայնի տնիրաւ է:

Ի Գիւմրաց Ազգ. Երկսեռ Վարժարանի Հոգաբարձութեան*)

Վ. Ասենադարի Ասենապետ
Ս. Հանդեմ Գ. Ս. Թովմասեան
7 մայիս 98
Վատնա

ԶՐԱՍՏԻՉ ՔԱՀԱՆԱՅԻՆ (**)

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Անցեալ մայիս 5 չորեքշաբթի օրուան «Երեւան»-ին մէջ կարդացի Տ. Գէորգ քահանայ Հիւրմիւլեանի կողմէն տրուած քանի մը քանակաւ քաղաքացիներու դրաց հիմնուելով իր թէ իրաւունք ունեցեր է իր ինծի խոստացած 100 Ֆրանկը չի վճարելու եւ գանձանակի հատոյթէն 0/0 25ը ինձ չի տալու: Երկու քահանայ

(*) Գանի մը ամիս առաջ գումարուած Ընդհ. ժողով մը Ազգ. Վարժ. Պատ. Հոգաբարձութեան պաշտօն յանձնած էր առ ժամանակեայ կերպով վարել Թագ. Խորհրդոյ գործերը մինչեւ որ յիշեալ Խորհուրդը ըստ օրինի կազմակերպուի: Ի. Խ.

(**) Ի. Խ. — Այս վերադարձինք մեզ կը դնենք. որովհետեւ Տ. Գէորգ քահանայ Տեղական թերթի մը մէջ հետեւեալ ստացոյ յայտարարութիւնը ըրած է իր պաշտօնակցին 100 Ֆրանկը կը կրնայ արժանապաշտութեան և առանց խղճահարստեան:

«Տ. Գէորգ քահանայ Հիւրմիւլեան, պատասխանելով «Իրազէկ»-ի հարցումներուն, կը յայտարարէ թէ, թէեւ Տ. Յովակիմ հօր 100 Ֆրանկ տալու խոստում եղած էր, սակայն նախ անոր չհաճելով, ժողովրդեան մէջ գաղթականութիւն յառաջ բերաւ. երկրորդ առանց հրամանի խառնակ կերպով տուները պտուղով զրամ հաւաքեց. երրորդ մեղքերն օրը գերեզմանատան մէջ կոթիւներու պատճառ եղաւ եւ այն օրուան ամբողջ հատոյթը իր քով մնաց. վերջապէս մեղքերն յետոյ իր խոսքը քաջուցեալ եւ մերժեց մասնակցիլ և կեղեցական արարողութեանց: Այս պատճառներով, Տ. Յովակիմ հայրը իրաւունք չունի որ եւ ինչ փոխարինութիւն ստանալու:» (Երեւան)

նաներու, այսինքն խաղաղութեան և ճշմարտութեան երկու պաշտօնեաներու մէջ նիւթականի վերաբերեալ վիճարարութիւն մը կը զգամ թէ որքան հակառակ է մեր կոչումին բարձրութեանը: Հետեւաբար չեմ կարող փափակել այդօրինակ վէճերով զբաղուելու: Սակայն նկատելով որ անձիս զէմ բացարձակ զրպարտութիւններ կան այդ տողերուն մէջ, առանց մասնաւորութեանց վրայ ծանրանալու, կրտսիպով յայտարարել, թէ

Ս. Ունեւորայի իրիկունը եթէ ոտքս լուալ չտուի ո՛չ թէ անհաճութեամբ էր, այլ անձնական տկարութեան հետեւանքով: Թէեւ ամեն խորհող մարդու համար յայտնի իրողութիւն մըն է, թէ ոտք լուալ չի տալը ամենեւին իրաւունք չի տար Տ. Գէորգ հօր իր պարտքը չը հատուցանելու:

Բ. 20—25 ընամիսէ ի վեր անոր կարողութեան զանկ մը նոյն ինքն Տ. Գէորգը առած էր ինծի որուն մէջ նշանակուած մարդոց ատեններն միայն մէկ քանի կրցայ զոտնել որոնցմէ գոյացածը 12 Ֆրանկէ աւելի չէ:

Գ. Ս. Զատիկին Բ. օրը գերեզմանատունը գացի, ուր երբէք կոթիւներ աւելի չունեցան, եւ ուր չարաչար յոգնութեամբ հիւանդացած ըլլալով հանգիստ միջոց եւ. օր եկեղեցւոյ մէջ պաշտօնս կատարած եմ, շատ անգամ առանց Տէր Գէորգ հօր ներկայութեան, Բայց եւ. օրէն ի վեր հիւանդութեան ծանրացած ըլլալով անկողնոյ կը ծառայեմ, ինչպէս կրնան վկայել Եկեղեցւոյ բոլոր սպասաւորներն ու զիս զարմանող բոլորներն:

Դ. Տէր Գէորգ հայր, հակառակ եղած կարգադրութեան ու խոստումներուն, որոշուած 100 Ֆրանկը տալ մեր ժնէ զատ, գանձանակի հատոյթէն իմ բաժինս (0/0 25ը) ալ ցարդ չէ վճարած:

Այս բացատրութիւններէս յետոյ ընթացողներուն կը թողուի գտնելու իր վճարը:

Մնա՛մ ազօթարար
6 մայիս 98
Վատնա
Յովակիմ ԲՆԵՂ.
Յովակիմեան

ԽՈՂՃԱՄԻՑ ԹՂԹԱԿԻՆԵՐԸ

Որքան անոնք որք խմորագրական բիւլ թէ շատ փորձառութիւն ունին, ազգային թերթերու թրգթակցութիւններն կարգաւորութեամբ

նայելու ի հարկին եւ ունեցած խօսակցութիւններուն պատշաճաբար մասնակցելու համար. այդ գիշերը այդ արթնութիւնը չունեցաւ, արթնութիւն կը սեմ որովհետեւ դասի միջոցին փոխանակուած սիրոյ փոխադարձ ակնարկէն ետք, չեղճալի կոչարն ուրիշի ներկայութեանը, գէթ այն առաջին օրը, Վահրամի առջեւ երկու անկարելի էր: Ինչեւայ թէ պարկէտ սիրոյ զգացում մը ուրիշի առջեւ ծածկել ջանալը ընդամենն է մարդուն համար: Ներքին քաջութեամբ ճաշի սեղանի վրայ արմուկը փողոցին վրայ նայող պատուհանին կոթնցոյցով, գանկը ափին մէջ, ներսիդին զիրար չեղճացնող զգացումներու խուլ կոթիւն արանջ կուտար որ ամենն ալ հաւասարապէս կապ ունէին Վահրամի հետ: Վահրամին տունէն դուրս ելնելը տեսաւ, ասոր վրայ երկրորդ զգոյն կարմիր մը անցաւ: Այստեղուն վրայէն ու սրբութեամբ, ասոր հետեւեցաւ ժամանակաւոր անդորրութիւն մը, երբ մանաւանդ քիչ մը ետք մայր ու հայրը ներս մտան: ճաշի սեղանը պատրաստուեցաւ

մանակ՝ միշտ կը մտածեն թէ, արդեօք քահանայ մը, վարժապետ մը, տիրացու մը չէ՞ այդ թրգթակցութեանց հեղինակը: Միջոցով զգեստն այդ մէկ քանի դաւաւարներու բաժին ինկած է թերթերու ազգային լրատու ըլլալը: անշուշտ պիտի ծափահարէինք անոնց ազգային կեանքի մասին տաժաժ շահագրգռումը, այդ մարդիկներուն՝ որոնք զրեւթէ միշտ ապրուստի ամենէ քիչ միջոց ունեցողներն են, և ատով հանդերձ փոյթ ու հոռու ցոյց կունտան ազգային գործերու նկատմամբ: Տխուր կէտն հոս է սա. կայն, որ այդ ազգային ըստած լուրերն յաճախ ազգի շահերուն հետ անմիջական առնչութիւն չունենալէ զատ, վարդապետի, քահանայի, ժամկիչի կոթիւններ են, և այդ լուրին հաղորդողներն, շատ անգամ չարիքը խափանելու, դարձան բերելու համար չէ որ զրիւ կը շարժեն, ալ անձնական հաշիւ մը մաքրելու յարմար տեղ նկատած են լրագրական տապարէլը:

Նշանակութեամբ արժանի կէտ մըն ալ կայ. թղթակիցները զրեւ. նուաժ են և յաճախ չեն պակսիր, որոնք խմորագրաց փոստակութիւնն շարաչար կը գործածեն, և երբ գրելու նիւթ չունին, իրենց մտածածն ու երեւայականը իրը ճշմարտութիւն և եղելութիւն գրի կառնան, իրողութիւններն կը խիղաթիւրեն անձնական ալ և ալ նկատումներով, և կը նկատին իրենց խիղապատակին խափթիւքը ժողովրդեան կլիւ տալ և որ յաճախ չի մարսեր այնպիսի իրիւրանքներ որոնք կը հայելիացնեն զրոյին սեւ սիրտն, հոգւոյն որակը և ներքին նպատակը:

Տեսնուած է որ թղթակիցներէ ոմանք՝ իրենց գիրքի, անհատական շահով, տպրած միջավայրի բերումով, ստեպ այս ինչը կը գովեն ու կը խնկարկեն, այսինչը

Հրանդը իր առջի զգաստութիւնը զրեւ. առ կամ աւելի ճիշտը ըսենք գտնալ կեղծեց, որովհետեւ այդ գիշերի զէպը Հրանդին վրայ բաւական ազդու հետք մը ձգեց: ճաշի տեսն ախորժակ չունէր. սեղանէն ետք զատերու պատրաստութեան եւ ընթերցումի համար երբ նշանակեալ քաջութեամբ, բաւական ազատ զգաց ինքզինքը ապա տեսաւ մը սիրտի պատարկութեամբ երկչոտ քուն մտաւ:

Գրեթէ միւսեւոյն բաներ պատահեցան Վահրամի ալ Յովհաննէս ազաի տունէն մեկնելէն ետքը:

Ե. Կամուսարակաւ

Եւրոպականի

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ(Տ)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Սիրոյ առաջին եւ անկեղծ դասերը, ամեն տարիքի մէջ ալ սովորաբար նմանօրինակ ազդեցութիւն կունենան. պարկէտ սիրահարը սիրոյ անջրպետին մէջ իր առաջին քայլը անվերջ յուզմունքով նետելով թոթովումով եւ երկչոտ յուզմունքով կը տեսնի: Առաջին տպաւորութեանէն ետք Վահրամ ինքն իր մէջ անդրադառնալով Հրանդին ձեռքը ուղկու մասին խորհրէր էր: սակայն, ինչպէս յաճախ կը պատահի այս տեսակ երիտասարդներու, իր եւ Հրանդին մէջ անգին անջրպետ մը նկատեց էր. Հրանդին հայրը մեծահարուստ մէկն էր, մինչդեռ ինքը անոր քով պարզ ծառայ մը. ծառայ եւ տէր այս մասին հաշտուէին իրարու հետ. օ՛հ որքան զգուշ էր այս: Ինչ մը ետք ինքնաբերաբար բխող տրիս-

րութեան վրայ աւելցաւ խղճահարութիւնը, Հրանդին սիրտը թուեց հանած ըլլալու դառն խղճահարութիւնը, որ սիրտը անպայման սեղմելով կարծես չնշառութիւնը արգելելու չափ առաջ գնաց, պահ մը նոյն իսկ տխրութիւնը խաւարեցաւ եւ չնշառեց: Երբ պատահածին պէս աչքի փայլակ մը արտեւանուեցին տակ, թարթիչներուն եզրը մարմնեցաւ: Յանկարծ թելը կարած զսպանակի մը պէս ցատկելով մեկնեցաւ իր տունը: Վահրամին ունեցած այս հոգեկան յուզմունքը թէպէտ վայրկեան մը տեսեց, սակայն մեր նկարագրածէն շատ աւելի պատկերներ կը պարունակէր իր մէջ: Տիկին Վերգինէ, կարգ մը միամիտ հայ մայրերու պէս Վահրամի ներքին յուզումէն եւ արտաքին նշաններէն բան մը չէր հետեւցուցած: միայն զայն առջի օրերէն քիչ մը տխուր տեսած էր:

Գանք Հրանդին: Դասի աւարտումէն ետք Հրանդն սովորութիւն ունէր իր դասատուին հետեւելու ծնողքին քով, անոնց ծա-

չարախօսելով կը դատաւիտանէր ո՛չ թէ իւրաքանչիւրը իր գործընդէն դատելով, այլ այս խեղաժիբու մը կը կատարեն անձնական շահերէ դըրեալ: Միայն անկախ դիրքի և անկախ նկարագրի տէր թղթակիցներու գրածներն են որ լոյս կը բերին և կը գոհացնեն ընթերցողները, ասոնք են խղճամիտ թղթակիցները:

Փորձերն ցոյց տուած են որ, այսօր քահանայ մըն է, դժգոհ իր հօտէն կամ հօտն իրմէ և կամ պաշտօն չունի, գործ կը փնտռէ, ասոր առաջին գործն կըլլայ սուտ մը յերիւրել, զրպարտել իր մէկ կարգակիցն, դաւել անոր գէմ և ա՛յդ ողորմելի զրպարտիչը կը կարծէ որ՝ եթէ լրագրի մը մէջ սուտ մը գլտորէ, կը յաջողի իր ծրագիրն գործադրել և կը հասնի իր նպատակին: Խեղճ մարդը չը մտածի որ սուտ և զրպարտանք, զանոնք յերիւրելն երեսուն հանելէ և անոր նուաստութիւնն պատկերելէ անդին չեն անցնիր:

Վաղը, գուցէ տիրացու մը, կամ լուսարար մըն է որ կը քննադատէ վարժապետ մը, և կամ անպաշտօն մէկն է, որ ախորժալուր ձայն ունի և կուզէ տիրացուի մը պաշտօնն ստանձնել. ահա կը խրկէ նամակ մը լրագրի խմբագրութեան մը. այսինչ տիրացուին ձայնն, ու վարքն, կեանքն այդ թղթակցութեան մէջ տխուր գոյնիւրով կը պատկերացնէ ու կը նկրտի ատով մէկին ու միւսին գաղափարն պղտորել և իրեն համար պաշտօն մը հայթայթել. անհեթեթ ծրագիր, որ ստէպ ջուրն ինչպէս դատապարտուած է. մասնաւոր որ լրագրիներու խմբագիրք, ա՛յ վարժուած ուսանող դուռնացած այդօրինակ մեքենայութեանց, ստիպուած են թղթակցի գրչին ու մտքին հետ՝ անոր սրտի և հոգեւոյ խաւերն ալ պրպտել:

Ինչ որ կընէ լուսարար մը տիրացուին, նոյնը կընէ հրեւեմի թաղական մը նորընտիր թաղականին մը, մոմածախ մը հոգաբարձուն. և այսպէս ահա մեր ազգային կեանքի մէջ կը նշմարուի չարակամութեան ախտանիշ մը. փոխանակ աշխատութեամբ յառաջանալու՝ ուրիշին ունեցածին վրայ կը նախանձինք և չունեցածին իսկ յափշտակելու կը ջանանք:

Թիւրիմացութեան տեղի չը տա. լու համար պարզեմք, թէ մեր մտքէն իսկ անցած չէ ըսել, թէ ամեն քահանայ, վարդապետ կամ տիրացու՝ որ պաշտօն չունին, այսպիսի հնարքներ ի գործ կը դնեն իրենց անձնական շահերու համար. կան այնպիսիներ, որոնք ինչ վիճակի մէջ ալ ըլլան, չեն իջներ իրենց բարձրութենէ այդպիսի նուաստ միջոցներու: Նոյնպէս պէտք չէ սխալ ըմբռնել մեր գրածներն, և՛ կարծել որ՝ եթէ երբեք ազգային լրատու թղթա-

կիցներ ազգային պաշտօնեաներ են, անոնք կը հաղորդեն լուրեր միայն իրենց անձնական շահերու նկատմամբ. մենք ընդհանուր տեսութիւն մը ըրինք և կը խոստովանինք որ ճշմարիտ ազգասէր պաշտօնեաներ և ճշմարտախօս թղթակիցներ միշտ կան: Ամեն պարագայի, փափաքելի էր որ թղթակիցներն անկախ դիրքի և անկախ նկարագրի տէր մարդիկ ըլլան, որպէսզի անգամ մը եւս աւելի խղճամիտ թղթակիցներ ըլլան:

Քննադատութեան ջերմ պաշտպան ենք և քաջ համոզուած որ ազգային կեանքի տկար կողմերն միայն քննադատութիւններով պիտի կարողանանք բարելաւել, և սակայն սուտն, զրպարտութիւնն, թշնամանքն, անձնական հաշիւներն՝ ազգասիրութեան քղին տակ քննադատութիւններ չեն:

Թղթակցի մը գրածներն այն ժամանակ միայն անպայման հաճոյքով ընթերցելի են. երբ անկախ կը գրէ իր մէկ ձեռքն կուրծքին վրայ դրած, անստիպ միայն իր խղճի ձայնին իսկ անոնք որ անհաստական կըքեր յագեցնելու համար թղթակցի ըլլալէ աւելի զրպարտիչներ են, անոնք որ անձնական շահու և եսասիրութեան համար թղթակիցներ են, անոնց համար ողջախօս ընթերցողներու արհամարհանքը միայն ունինք:

Վահրամ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵԼՈՑ

— 0.0. —

Գրեթէ մէկ ամիս առաջ նախադրելով ծանուցած էինք մեր պատրաստականութիւնը ի նպաստ սովորյալ ներկայացում մը տալու, որ յետաճգուեցաւ Ազգ. Հոգաբարձութեան ձեռամբ կատարուելիք հանգանակութեան պատճառաւ: Մակայն նկատելով որ մեր սովորածն եղբայրները անմիջական օգնութեան պէտք ունենալով հանդերձ մեկ խոստացուած հանգանակութիւնը դժբախտաբար ցարդ չը գործադրուեցաւ, մեզ անծանօթ պատճառներով, և գուցէ իսկ բնաւ չը գործադրուի. սետի այս անգամ կուգանք յայտարարել թէ խառնախառն անձնուիրաբար և առանց նիւթական ու եւէ վարձաւորութեան պիտի ներկայացնէ ամսոյ 15ի շաբաթ իրիկունը «Սաէ-տինէնիէ» թատրոնին մէջ, «ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐ» ընդհանրութեամբ Տ. Տօք. փափաքեալն է և Տ. Գուրպէթեանի, որոց միջոցաւ ներկայացման արդիւնքը ամբողջովին և առանց յապաղման պիտի ուղարկուի առ որ անկէ:

Թատերախաղը յոյժ խնամօք

պատրաստուած է, և հանգիստ կանները գոհ ընելու համար ամեն ջանք ի գործ պիտի դրուին:

Տոմարները կը ծախուին «Իրաւունք» ի խմբագրատունը, որուն կնիքը չը կրող տոմարները պէտք չէ ընդունիլ:

Անդամք զաղրակաւ քատելախաղովին վառելայի:

Պայծառ Ֆատուհեան Սմարտ Խաչատուրեան Կարապետ Պալճեան Հայկ Մինասեան

ԼՐԱԲԱՂ

— 0.0. —

Նիւ-Եօքքի մէջ հրատարակուելի սկսած է Հայրենիք անունով շաբաթաթերթ մը, որուն առաջին թիւն մեզ հասաւ: Հայրենիք կը յայտարարէ թէ իր խմբագրական մարմինը կազմուած է «բարոյապէս ոգեւորուած, նիւթապէս բաշակուած, խուճաք մը կրիտասարգներէ», և կը յաւելու թէ «Հայրենիք» որ եւ է կուսակցութեան օրկանը չէ:

Կը մաղթենք որ «Հայրենիք» ի այս յայտարարութիւնը անկեղծ ըլլայ. իսկ հակառակ պարագային զրպարտիչ թերթին պէս գոյնը դուրս կուտայ:

—Արարկիւրէն կը գրեն թէ՛ Ազգ. Պատրիարքարանի և Միսիոնարական կեդրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովին միջեւ եղած կարգադրութեանց և հրապարակային յայտարարութեանց հակառակ, տեղւոյն օտար սրբանոցներու վարիչները հայ սրբերուն վրայ ճնշում բանեցուցած են, որպէսզի ասոնք Ձատկական տօնի առթիւ Ազգային եկեղեցւոյ մէջ իրենց հոգեւոր պէտքերը կատարելէ խոյս տան: Առաջն. Տեղապահը սրբելը մէկիկ մէկիկ քննած ու վայր հաստատած է. և այդ պատճառաւ տեղւոյն ժողովուրդին յուզումը դարձեցնելու և սրբերու խիղճը ու անձը կրօնական բռնադատման ազատելու համար պաշտօնական բանակցութեան ըսկսած է:

—Վանայ նահանգէն զատ Հայաստանի ուրիշ կողմերէն ալ սովորուելներու ազդեցութիւն հեծեմանք կը լսուի. այս շաբաթ Պայպուլթէ, Տիգրանակերտէ և Բաղէրշէ գրութիւններ հասած են, որոնք Պատրիարքարանէ օգնութիւն կը խնդրեն: Նպաստից Յանձնաժողովը ԳԾ. սր ուղեց գումար մը զրկել Բաղէրշէ Առաջնորդարանը՝ ամենէն աւելի կարօտ գիւղերուն բաժնուելու համար:

—Կրօն. Ժողովը սրուից յառաջիկայ նստին մէջ նկատողութեան առնել Տ. Գեորգ քահանայ Հիւրմիւլեանի քաղաքիս մէջ կատարած կրկնամուսնութեան խնդրոյն առթիւ Պատրիարքարան հասած

տեղեկագիրները:

Քանի որ Ժողովը վերջապէս հաճած է զրաղել Տ. Գեորգով, փափաքելի է որ չը մոռնայ նկատողութեան առնել այդ քահանայի Եղիպտոսի մէջ ձիթախղով մկրտութիւն ընելն և Յունաստանի մէջ մատուռ հաստատելու համար դրամ հանգանակել ու առնել քաղել: Տէրտէրին այս սեւ աւարքները ժամանակին Պոլսոյ թերթերու մէջ ալ հրատարակուեցան, բայց ձեռնհաս մարմնոց կողմէ նկատողութեան չէին առնուուած. այս պատճառաւ ալ Տ. Գեորգ իր յանցապարտութեանց մէջ ինքզինքը քաջալերուած զգաց և յաջողեցաւ իր շահատակութեան ապարկէզ ընտրել վառնան ալ. ուր ալ եւս իր սխաղործութիւնները ամենի առջեւ պարգուած ըլլալով, ժողովուրդը գրեթէ առանց բացառութեան պըժգանք կը զգայ իրմէ:

Կրօն. Ժողովը ամենախմաստուն քաջ մը առած պիտի ըլլայ եթէ այդ քահանայ Պոլկարիայէն հեռացնէ և ըստ օրինի պատիժը սահմանելէ վերջ իր հայրենիքը զրկէ, ուրկէ դուրս ելած է միայն իր պժգալի արժաթագատութեան յագուրթ տալու համար:

Վերջին ժամուս կիմանանք թէ Տ. Գեորգ Ձատկի առթիւ 1300 Քրիստոսի մօտ դրամ հաւաքած ըլլալուն հակառակ, այդ գումարէն Տ. Յովակիմ հօր 100 Քրանդ իրաւունքը չի տալու նպատակաւ ժողովուրդէն նպաստ հաւաքելու պիտի ձեռնարկէ, որպէս զի ատով Տ. Յովակիմը ճամբու դնէ:

Շիտակը, տէր պապան այդ հաւաքումը ընելու համար պողպատէ աւելի պինդ երես ունենալու է:

—Պատրիարքը թաղրիւր մը ուղղելով ձեռնհաս իշխանութեան խնդրած է որ թէ՛ վաճառականներու և թէ՛ բանուորներու գաւառներէն Կ. Պոլիս երթեւեկութեան համար հարկ եղած դիւրութիւնը չի զրացուի:

—Վանայ Լէսք գիւղի հարիւր տունի չափ դաւանափոխ ազգայիններն ալ վերադարձեր են Մայրենի Եկեղեցւոյ գիրկը:

—Պանտրմայէ 50 ոսկի զրկուած է Պատրիարքարան, ի նպաստ վանայ կարօտեալներու: Պանտրմայիք այս նպատակաւ սկսուած հանգանակութիւնը դեռ պիտի շարունակեն:

ՊԱՆՏԱՏ ՇՐՄԵՆՏԵՐԻ ԽԱԹԹԻ

— 0.0. —

Պաղատա շրմէնտըֆէր խաթթութիւնն ինչո՞ւր իչին Անատոլու շրմէնտըֆէր գումբանեասընը Պապը Ալիտէն եէնիտէն պաղը թէք-իֆաթտա պուլընտըղը եաղըմըշ իտի:

Ալընան մալիւմաթա կէօրէ, մեղքերը գումբանեաս՝ Էնգուրէտէն թրապիզոն վէ Էրզինկեան իւզէ. բինտէն Էրզրումա գատար ուղա-

